

«Թատրոնի մարդուց, բարեկամ Գևորգ, թատրոնի մարդու համար զրել մի վերտառություն, այն էլ թատրոնին նվիրված այս գրի վրա, ոչ հեշտ է, ոչ տեղին... քանի որ ասում եմ — և ինքս գիտեմ այդ, — թե իրերի բերմամբ թատրոնը գնում է զեպի անհությունն Սխալ է այդ: Այլ կյանքը, որ հակամեա էր թատրոն զառնալու, այնքան արագ է զառնում այդ և արդեն դարձավ, որ մարդը բացահայտ դերասան է այս ընդարձակ բեմում: Երեսովն այս գուցե սպանի թատրոնին կամ գերասանին իր անհատական իմաստով, բայց ընդհանրական իմաստով մեկի տեղ հիմա կունենանք հազարներ».

Միլիոններ... ահա թե ինչու, պնդիր գոտի՛դ Գևորգ, զի քո նախորդները բացառության կին բոլորի մեջ, իսկ հիմա, դու՛ և քեզ նմանները մասը կիններ մի ամբողջության ուզեկ կամ չուզեք:

Եվ հարց է ծագում, թե ո՞րն է զերազնիվ՝ մեկը լինել բոլորի՛ համար իր ինքնության զիտակցությամբ, թե լինել բոլորից մեկը... այնպես բնազդմամբ, իրերի բերմամբ առանց ինքնադիտակցության փրկարար առարկայության:

Խորհիր այդ մասին:

Եվ եթե հանդիպենք մի այլ մոլորակում, ես հին զերասան, իսկ դու նոր, կասես ինձ թե ո՞րն է լավագույնը այս երկու վիճակներից. որոնց դժբախտաբար ենթակա ենք միայն:

Վահեամ Փափազյան»

ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հաղորդում ԲԱԿԻԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ

Վահեամ Փափազյանը համաշխարհային համբավ է ստացել որպես շեքսպիրյան թատրոնի դերասան, իր բեմական երկարատև գործունեության ընթացքում շունչ ու կենդանություն տալով մեծ դրամատուրգի այնպիսի հանրաճանաչ կերպարների, ինչպիսիք են՝ Օթելլոն, Համլետը, Արքա Լիբր, Մակբեթը, Ռոմեոն, Բասանիոն և ուրիշներ:

Փափազյանի արվեստը աշխարհագրական սահմաններ ընդգրկող երեսույթ է, թերևս, բացառիկ երեսույթ համաշխարհային թատրոնի պատմության մեջ: Չե՞ որ Փափազյանը խաղացել է Զիրլարթից մինչև Կամշատկա, Մուրմանսկից մինչև Թեհրան, Անգլիայից մինչև Եգիպ-

տոս, Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի հարյուրավոր մեծ ու փոքր քաղաքներում ու գյուղերում: Եվ մի քանի լեզվով: Սակայն, ինչպիսի ընդդրկում էլ որ ունեցել է նրա խաղը, ինչ լեզվով էլ որ հանդես է եկել նա, միշտ և ամենուրեք Փափազյանը բարձր է պահել իր ժողովրդի անունը: Իր նամակներից մեկում այս առթիվ նա գրել է. «Ես հայ եմ ծնվել, հայ էլ կմեռնեմ... Ես մշտապես շեմ աշխատել Հայաստանում, բայց աշխատել եմ մեր Մեծ Միության բոլոր քաղաքներում, բայց և այնպես ես միշտ հայ եմ մնացել և իմ հաջողությունը միշտ եղել է հայ արտիստի հաջողություն»:

Ահա նույն՝ 1939 թվականի մի այլ վկայություն, որն ավելի է հիմնավորում ու խորացնում մեծ ընդգրկումների Փափազյանին, նա գրել է. «Վլադիվոստոկից մինչև Կիև, Մուրմանսկից մինչև Օդեսա, Փարիզից մինչև Եգիպտոս, Երկրագնդի բոլոր ճամփաներին, ինչ լեզվով էլ որ ես խաղացել եմ, եթե դափնիների ինչ-որ մաս եմ ստացել, որպես արտիստ, ապա դրանց մի մասը եղել են իմ հարազատ Հայաստանի ժողովրդական արկեստի դափնիները, քանի որ այնպիսի մի արտիստ, որպիսին ես եմ, որտեղ էլ որ աշխատել է, ինչ լեզվով էլ որ հանդես է եկել, ցանկացել է այդ, թե ոչ, նա միշտ աշխատել է իր ժողովրդի փառքի համար»:

Եվ այսօր, պատմություն դարձած Փափազյանի հիշատակին անդրադառնալիս, նրա արխիվի անտիք նյութերից, որոնք պահպանվում են Հայաստանի գրականության և արվեստի թանգարանի թատերական բաժնում, ուղղում ենք ընթերցողներին ներկայացնել որոշ փաստեր ու վըկայություններ, որոնք վերաբերում են շեքսպիրյան թատերական աշխարհում կատարած նրա գործունեությանը, բնութագրում նրան որպես քաղաքացու և արտիստի:

Մեծ գործունեության և մեծ շփոմների տեր դերասանի հետ խաղլու, նրա օգնությանը դիմելու մասին բազմաթիվ փաստաթղթեր են հասել մեզ: Հիշատակենք դրանցից մի քանիսը: Ծովա դերասանուհի Ա. Կամենեց-Սաֆոնովան, դիմելով Փափազյանին, գրել է. «Ես տարեց դերասանուհի եմ... բայց իմ մեջ դեռևս վառվում է գեղարվեստական ճշմարտության կայծը, Ներկայումս Դուք միակն եք, բացի Ստանիսլավսկուց, նրա անկեղծ կիրառողը: Ես երջանիկ կլինեի, եթե երբեք Դուք ծեր կանանց կարիք ունենայիք, ես Ձեզ համար կիսաղյի, իհարկե, առանց վարձատրության և ոչ մեկ անգամ, այլ մշտապես»:

Փափազյանի հետ Օֆելիա կամ Դեղնեմոնա խաղալու ցանկություն,

է հայտնել նաև գերասանումի Սոֆյա Աբրամ-Շետովան՝ Հիշեցնելով, որ Մոսկվան ծարավի է նրա Համլետին:

Հետաքրքրական է Փափազյան-Օթելո, Գրիգորի Գե-Յաղո միասին խաղալու մտադրությունը, որ նրանց մեջ ծագել է 1928 թվականին Գեի նամակում այս առթիվ կարդում ենք. «Զեզ Հետ միասին մենք, իրոք, կարող ենք մեծ զործ կատարել ոչ միայն ՍՍՀՄ-ում, այլև արտասահմանում: Մեկս մյուսին հնարավորություն տալով հանդես գալու սիրած գերերում, օգնելով մեկս մյուսին, մենք կարող ենք հնարավորություն սահեղձել միասին հանդես գալու 3—4 ներկայացման մեջ, ինչպես հանդես էին գալիս ԱղելՇեյմները...»

Վերջին անգամ ես Ցագոր խաղացել եմ Թումագո Սալվինիի հետ, երբ նա եկել էր մեզ մոռ՝ Պետերուրդ, Ալեքսանդրինյան թատրոն: Ինչպես խոսում էին և մամուլում գրում, այլպիսի զույգախաղ այս պիեսում Ռուսաստանում գեռ չէր եղել Գերմանիայում Բառնալը հանդես է եկել Պոսասրախ Հետ, բայց և նրանք ունեին հիանալի արտիստումի: Նրա աղքանունը չեմ հիշում: Եկող ձմեռ տոնելով իմ հորելւանը, ես կվերցնեի մի տարվա արձակուրդ, կզայի Թիֆլիս և մենք կունենայինք իսկական գերասանական շրջադարձություն, թեկուղ զեափի Ամերիկա»:

Մեզ անհայտ է, հաջողվել է բեմի այս երկու խոշոր վարպետների համատեղ ելույթը, թե ոչ, բայց ցանկությունն ինքնին շատ բան է ասում երկու մեծությունների սահեղձագործական համագործակցության մասին:

Փափազյանի մեծությունը հավաստող, Եվրոպայում վստահությամբ հանդես գալու առաջարկով և Սովետական Հայաստանի արվեստը ներկայացնելու քաջալերական խոսքերով է տոգորված թատերական գործիշ Աննա Բուդալյանի նամակը, որ զրել է Փարիզից 1928-ի հունվարին: Նամակում զրված է. «Այստեղ ամեն պետություն յուր լավագույն արտիստին ուղարկում է խաղալու ֆրանսիացիների հետ և վճարում է նույնիսկ, որպեսզի պրոպագանդ անե իր երկրի համար: Ես կարծում եմ, որ նույնը պետք է անել և Զեզ Հետ... Ես չգիտեմ ինչպես է նայում մեր Երևանի կառավարությունը այդ հարցին, սակայն շատ ցանկալի կլիներ մեզ համար մի այդպիսի բան անել: Ցուց տալ Եվրոպացիներին, որ Խորհրդային Հայաստանում այլևս գոյություն չունեն սուր ու լաց, մերկ դիակներ (ինչ էր զաշնակների օրերին), այլ Խորհրդային Հայաստանը այժմս օր-օրի վրա հասունանում է խաղաղ, անդորր և շառագույն գորիզոնից կենսարար կարմիր արևն է պայծառ ու զվարի-

ծագել... Թող տեսնեն և հիանան, որովհետև ես գրեթե ամեն գիշեր լինում եմ սրանց՝ ֆրանսիացիների ներկայացումներին, ես հավատացնում եմ Ձեզ, որ Ձեր Դոն-Ժուանը, Ձեր Օթելոն, Ձեր Կորրադոն, սըրանք չունեն: Ես չգիտեմ, որքան եք Դուք հառաջադիմել այս 10-ը տարում, բայց ա'յն Փափազյանը, որ խաղում էր այն ժամանակ, պարզերես կարող է խաղալ Յունասիայի, Փարիզի ամենաընտիր դերասանների հետ»:

Եվ Փափազյանը գնաց Փարիզ: 1932-ին հայ և ֆրանսիացի դերասանների հետ նա խաղաց «Համլետ» և «Օթելո», ցույց տալով սովետական դերասանի ոչ միայն վարպետությունը, այլև այդ հանրաճանաչ կերպարների ինքնատիպ մի մեկնարանություն, որի հիմքում ընկած էր մարդկայնության բարձր գաղափարներ՝ սոցիալական ընդունումով:

Ամենուրեք բարձր է գնահատվել Փափազյանի արվեստը: Նրա նըկատմամբ սերը դրսեւորիլ է և՛ հանդիսատեսների նամակներում, և թատերախոսների ուղենղիաներում: Բայց կա գնահատության այլ միջոց ևս, որից մեկը բերում ենք այստեղ: Դա ուկրաինացի մեծ բանաստեղծ և հայ ժողովրդի բարեկամ Պավլո Տիշինալի նամակն է՝ գրված 1949-ին, Ահա այն.

«Շատ հարգելի և թանկագին ժողովրդական մեր արտիստ
Վահրամ և Փափազյան»

Ձեր նամակը ես ստացել եմ: Նրա մեջ շատ շերժություն և սեր կադեպի ուկրաինական կուլտուրան և ես լիովին բաժանում եմ մոսկովյան դրամատիկ անսամբլով Ուկրաինա գալու Ձեր ցանկությունը: Ուստի, Ձեր նամակից քաղվածքը ես իսկույն և եթ հանձնեցի ՈՒՍՍՀ արվեստի գործերի կոմիտեի նախագահ Նիկոլայ Պետրովիչ Պոշչինին: Դըրանից բացի, ես զանգահարել եմ նաև բաժին՝ այդ հարցի առթիվ: Կարծում եմ, որ կոմիտեն չի ուշացնի Ձեր պատասխանը:

Ողջույններով՝ Պ. Տիշինա»

Փափազյանը շատ է հանդես եկել Ուկրաինայում: Նրան տեսնողներն այսօր էլ խորին ակնածանքով են խոսում նրա արվեստի ու վարպետության մասին:

1925 թվականին, երբ Փափազյանը Օթելո է խաղացել Խարկովում, հոգեբան-պրոֆեսոր Խսահակ Տուրկելտառուրը «Երեկոյան ռադիո» թերթիկում նրա մասին գրել է. «Առանց շափազանցության կարելի է ասել, որ Փափազյանը մեր ժամանակի լավագույն Օթելոներից մեկն է»:

Նա շատ մեծ ձիրքի, արտահայտիլ տեխնիկայի տեր դերասան է: Ու-
նա շատ մեծ ձիրքի, բուռն խառնվածքով, բացառիկ զիմախաղով Փափազյանն ուղղա-
կի Հրաշքներ է գործում: Սակայ է պատահում, երբ այդպես նկա-
տելի և բազմագույն է խաղում դերասանի ձեռքի լուրագանչուր մատը»:

Փափազյանը կարդարով այս տողերը զոհունակություն է հայտնել
Հոդվածադրին: Վերջինս պատասխանելով նրա նամակին, գրել է. «Իմ
ուսցենդիայում ոչինչ ավելի չի եղել, որին արժանի վիճերի Գուրի Ընդ-
հակառակը, ևս ուսւյնիսկ կարծում եմ, որ ըստ իմ սովորության, մի
քիչ ժամա եմ դավեհստի մեջ»:

Լենինգրադի թատերական գործի Եկատերինա Վալուինան Փա-
փազյանին հասցեագրած իր նամակներում նշել է ոչ միայն նրա շերս-
պիրյան զերակատարումների գնահատության մասին, այլև հանդիսա-
տեսների՝ Փափազյանի նկատմամբ ունեցած սիրո մասին: Մի բան, որն
ավացուցեց կյանքը և վարպետաց վարպետը կապվեց Լենինգրադի
հետու եվ այսպես, 30-ական թվականներին Վալուինայի դրած նա-
մակներում կարդում ենք. «Ի՞նչ երջանկություն է կարողանալ հասա-
րակությանը պահել իր ողմորության իշխանության տակ, ստիպել վե-
րապրել տառապանքներն ու ուրախությունները, լացն ու ծիծաղը...
Զեր տաղանդն օթելույի դերում ինձ թվում է լիովին հավասար է Շեքս-
պիրի տաղանդին: Դուք հանկարծ դարձաք այն ամենաաղնիվը, ինչ կա
երկրի վրա: Դա սբանչելի է, երի՞ց սբանչելի»:

Ես տեսա Օթելոյին՝ մեծ, հզոր ու խոր հզոր տեր Օթելոյին, այն
հզորու, որով և՛ երանությունը, և՛ տառապանքը դրսնորվում են հակա-
յական, անսահման շափերով, և տանջանքներից երկարացած ու ալ-
լանդակած այդ սև դեմքը, այդ խուզ և սարսափելի հանգիստ ձախը,
այդ արբայական քայլքը և մեծ մարդուն վայել ձևերը խորապես դրոշ-
վել են հիշողությանու մեջ և նրանում պահվող լավագույն գանձերից են:

Դուք չեք կարող զգալ թե նա (հանդիսատեսը — Բ. Հ.) ինչպես է
գնահատում Զեր գեղեցիկ, խոր տաղանդը: Ինչպես ենք մենք ուզում
մշտապես տեսնել Զեզ, կանոնավոր ելույթներով, վերջին հաշվով միե-
նույն է, թե ինչ լեզվով: Մեծ կլինի բեմը, թե փոքր թատրոնը — միայն
թե Զեր տաղանդին համապատասխան դերացանկ լինի: Այն ժամանակ
ես համոզված եմ, Դուք կնվաճեք ողջ Լենինգրադի ուշադրությունը:

Երբեք ես չեի կարող ծիծաղել Զեր ստեղծած հոյակապ «Համլե-
տի» վրա: Ինչքան եմ բարկացել Զեզ վրա, որ հանել եք այն Զեր խա-
ղացանկից, թույլ շտալով հագենալ նրանով... Մենք սոված ենք, մենք

քաղցած ենք, տվեք մեզ իսկական հաց — Շեքսպիրին, Շիլերին, Գոլդինին և Մոլիերին»:

Գրեթե նույն միտքն է արտահայտված մի այլ լենինգրադցու՝ Հանդիսատես Տատյանա Կաբարովայի նամակում, որ նա գրել է 1938-ին. «Մավրի կերպարը, — գրել է նա, — հասարակ ու հպարտ է, ոյուրահավատ ու լիարյուն, հավատարիմ իրեն; Զեր ավարտուն և դրվագված արվեստը մեզ համար արժեքավոր է և նրանով, որ անմիջական հաճույք պատճառելով մասսայականացնում է համաշխարհային գրականության կլասիկներին, որ այնպես անհրաժեշտ է մեզ... Ափսոս միայն, որ հազվադեպ և քիչ ենք տեսնում Զեզ; Մի՞թե Համլետը, Մակբեթը, Մոռը Զեր գերերը շեն»:

Եվ այսպես՝ դատողություններ, դիտողություններ, տպավորություններ, առաջարկություններ, ցանկություններ, զնահատություններ, պահանջներ, մի հանգամանք, որ ինչպես ժողովրդական առածն է ասում, ում ինչքան շատ է տրված, նրանից ավելի շատ է պահանջվում։ Փափազյանը գոհացրեց ամենքին, բայց նրա մի ցանկությունը անկատար մնաց։ Նա չհասցրեց Օթելլո խաղալ արաբերեն, որի կենսագործման համար շանք չի խնայել նրա մեծ երկրպագու, շեքսպիրագետ և ուժիսոր Հովհաննես Փիլիկյանը։

ՄԻ ԷԶ ՓԱՓԱԶՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՕՐԵՐԻՑ

Հաղորդաւ ԼՈՒՍԻԿ ԱԹԵՂՅԱՆԻ

Փափազյանի արխիվում պահպանվել է հինգ մեքենագիր էջ, գրպած ուսւերեն՝ «Շեքսպիրը Խորհրդային երկրում»։ Սա կամ ճառ է, որ ասվել է ուսդիոյով, կամ էլ հոդված, գրված արտասահման ուղարկելու նպատակով։ Երկուսից որն է, հայտնի չէ։ Հայտնի է սակայն, որ գրվել է Հայրենական պատերազմի օրերին։ Այն ժամանակ, երբ Փաշխատական զորքերի գեմ խորհրդային ժողովուրդը հավաքագրում էր իր բոլոր ուժերը, Մոսկվայի փողոցներում փակցվեցին գոնավոր աֆիշներ, վրան մի հանրածանոթ անուն՝ «Շեքսպիր»։ Աֆիշը հայտնում էր, որ հունիսի 12-ի երեկոյան, Զայկովսկու անվան նորակառուց համերգային սրահում կազմակերպվում է մեծ երեկո, որտեղ տեսարաններ են խաղացվելու Շեքսպիրի ողբերգություններից ու կատակերգու-